«Քայլ առ քայլ»բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝. Երաժշտական ունկնդրումը որպես երեխայի երաժշտագեղագիտական ճաշակի զարգացման միջոց

Դաստիարակ՝Կարինե Մարգարյան
Մանկապարտեզ՝«Փարաքար համայնք.Մերձավանի մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն……..……3-4

Գլուխ 1

Երաժշտությունը մանկապարտեզում…….5-6

1.2Երաժշտական դաստիարակության նպատակը և գործունեության ձևերը(երաժշտական ունկնդրումը)

1.3«Երաժշտություն» առարկան որպես գեղագիտական դաստիարակության կարևոր միջոց

Գլուխ 2

Երաժշտական ունկնդրումը `երաժշտական դաստիարակության կարևոր տեսակներից մեկը ……11

Գործնական աշխատանք……..12-13

Տնօրենի եզրակացություն……..14

Եզրակացություն ……15

Գրականության ցանկ ……16

Ներածություն

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում անգնահատելի դեր ունի գեղագիտական, մասնավորապես՝ երաժշտական դաստիարակությունը և երաժշտական մշակույթի ձևավորումը, ինչն այս տարիքում նպատակահարմար է իրականացնել ազգային երաժշտության միջոցով: Երեխայի կյանքում երաժշտության դերի մասին, խոսելիս հատկապես կարևորում ենք երաժշտական մշակույթի ձևավորումը, ինչը պայմանավորված է ոչ միայն երաժշտության դրական ազդեցությամբ: «Երաժշտություն» առարկան մանկապարտեզում դիտվում է որպես արվեստի դաս եւ Մարդու դաստիարակության միջոց, որի հիմքում՝ ազգային եւ համամարդկային երաժշտությունն է: Արվեստի այդ դասերին երեխաները ներգրավում են երաժշտական հնչյունների ներդաշնակ «աշխարհը»՝ երգում, երաժշտություն ունկնդրում, կատարում երաժշտառիթական շարժումներ, պարում, փոքրիկ երգ հորինում, նվագում ռիթմական եւ մեղեդային փոքրացված մանկական նվագարաններով, երգում ձեռքի նշաններով եւ նոտաներով, այդ ամենից ստանում հոգեւոր եւ երաժշտագեղագիտական հույզեր ու տպավորություններ:

«Երաժշտություն» առարկայի նպատակը՝ հոգեւոր եւ բարոյագեղագիտական արժեքներով օժտված՝ երաժշտության գիտակ եւ ակտիվ Մարդու դատիարակություն է, ով կարող է արժեւորել հայ ազգային եւ համամարդկային երաժշտական մշակույթը:

Այդ նպատակի իրագործումը պահանջում է լուծել մի շարք խնդիրներ.

• սաների մեջ երաժշտության հանդեպ սեր եւ հետաքրքրություն, հուզական զգացում սերմանելն ու խթանելն է:

• Զարգացնել նրանց երաժշտական ընդունակությունները՝ լսողությունը, երաժշտառիթմական զգացողությունը, երգչային ձայնը,

- ստեղծագործական երեւակայությունը, կատարողական հմտությունները, երաժշտության կերպարային ոլորտները ներթափանցելու եւ ընկալելու կարողությունը, երաժշտագեղագիտական ճաշակը:

• Երաժշտական դաստիարակության հիմքում դնել հայ ժողովրդական, դասական եւ ժամանակակից երաժշտությունը եւ զարգացնել երեխաների հուզագեղագիտական ընկալումն ու արձագանքումը:

•Սովորեցնել երաժշտատեսական այնպիսի գիտելիքներ, որոնք բխում են երեխաների երաժշտական զարգացման ու դաստիարակության պահանջներից:

Գլուխ 1

Երաժշտությունը մանկապարտեզում

Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաների մեջ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, նպաստել ռիթմի ընկալմանը և երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների դրսևորմանը պարերում, երաժշտական խաղերում և այլ իմպրովիզացիոն իրավիճակներում: Երաժշտական դաստիարակությունը նպատակ ունի երեխաներին հաղորդակից դարձնել ազգային (հայկական ժողովրդական և ազգագրական երաժշտությանը) և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնել ազգային (դուդուկ, զուռնա, թառ, քամանչա, դհոլ, քանոն և այլն): Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության ուղղությամբ պետք է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Երաժշտության ունկնդրում – դաստիարակել հետաքրքրություն և հուզական վերաբերմունք տարբեր ժանրի երաժշտության նկատմամբ,
2. Երգեցողություն –զարգացնել երաժշտության ընկալումը, ծանոթ ստեղծագործություններն ըստ նախանվագի կամ մեղեդու հիշելու և տարբերելու կարողունակությունը, ճիշտ ձայնակազմավորումը, ձայներանգի մաքրությունը: Երեխաները ձեռք են բերում որոշակի պատկերացում երաժշտական հնչյունի բարձրության, տեմբրի, հնչյունի ուժգնության մասին, երգերում և երաժշտական խաղերում ձգտում են կերպարի արտահայտիչ կատարմանը (վերարտադրմանը):
3. Երաժշտառիթմիկ շարժում, պարեր, խաղեր-ձևավորել երեխաների կատարողական ունակությունները, երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների արտահայտչականությունը, պարերում և երաժշտական խաղերում իմպրովիզացիոն շարժումներ կատարելու կարողունակությունը[1]:

Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել

ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով: Հայոց մեջ երաժշտական կրթության ամենամեծ գիտակն ու ուսուցիչը Կոմիտասն է, որից սովորելը իրենց առաջնային պարտքն են համարում մեր երաժշտության երախտավորները, սակայն բոլորն էլ այդ օվկիանոսի մի չնչին մասն են միայն յուրացրել կամ ճանաչել: Մանկապարտեզում երաժշտական նյութը պետք է լինի անենալավն ու փորձվածը, այն, ինչը ստեղծվել է կյանքի մեջ՝ կյանքի գույներով, խաղերով: Դա, իհարկե, ազգային ստեղծագործությունն է՝ երգը, պարը, պարերգը, խաղերգը, ինչպես նաև խաղիկը, ասիկը: Միևնույն ժամանակ պետք է իմանանք՝ ինչպես մատուցել, որ մանկան հոգու մեջ թողնի այն հուզական երանգը, որով ստեղծվել է:

Զանազան խաղերի միջոցով պետք է անել այնպես, որ երեխան անդրադարձնի բնության ձայները՝ ծիտիկի ծլվլոցը, շնիկի հաչոցը, կատվի մլավոցը, գորտի կռկռոցը, և այլն: Այդ բնաձայնություններով կարելի է կատարել նաև ուսուցանվող երգը, մանավանդ, եթե սանը դեռ չի կարողանում պարզ խոսել, կարողանում է բնաձայնություններով երգել:Երեխաները բնության և կենդանիների՝ իրենց իմացած ու սովորած ձայները մեծ հաճույքով ու ճոխությամբ կօգտագործեն իրենց խաղացած հեքիաթ-ներկայացումներում: Դաստիարակն ինքը պետք է իմանա և երեխաների հետ շփման ժամանակ օգտագործի և բնականորեն ուսուցանի մարդկային զանազան բացականչություններ:[1]Դրանց ելևէջները և հնչերանգը գոյություն ունեն մեր երգերում, ուստի հարուստ և բազմազան բացականչությունների տիրապետող մարդը հաղթահարում է միօրինակ երգեցողությունը: Չէ՞ որ այդ բացականչությունները արտահայտում են զանզան զգացմունքներ, որոնք հարազատ են մայրենի լեզվին և ոգուն:

Մեծ օգուտ կարելի է ստանալ, եթե ստեղծվի հատուկ ձևավորված երաժշտական սենյակ: Սենյակում լինելու են զանազան տիպի նվագարաններ: Սենյակը հարկավոր է հնարավորին չափ այնպես կահավորել, որպեսզի նվագարանները ջարդելու «հնարավորություն» քիչ լինի:

1

1.2Երաժշտական դաստիարակության նպատակը և գործունեության ձևերը(երաժշտական ունկնդրումը)

Վաղ տարիքում երեխաների երաժշտական դաստիարակության նպատակն է նրանց մեջ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, նպաստել ռիթմի ընկալմանը և երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների դրսևորմանը պարերում, երաժշտական խաղերում և այլ իրավիճակներում: Երաժշտական դաստիարակությունը նպատակն է երեխաներին հաղորդակից դարձնել ազգային (հայկական ժողովրդական և ազգագրական երաժշտությանը) և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնել ազգային նվագարաններին (դուդուկ, զուռնա, թառ, քամանչա, դհոլ, քանոն և այլն):

Մասնագիտական գրականության մեջ հաստատություններում երեխաների երաժշտական դաստիարակության ուղղությամբ խորհուրդ է տրվում իրականացնել գործունեության հետևյալ տեսակները

1. **Երաժշտության ունկնդրում.** դաստիարակել հետաքրքրություն և հուզական վերաբերմունք տարբեր ժանրի երաժշտության նկատմամբ,
2. **Երգեցողություն**. զարգացնել երաժշտության ընկալումը, ծանոթ ստեղծագործություններն ըստ նախանվագի կամ մեղեդու հիշելու և տարբերելու կարողությունը, ճիշտ ձայնակազմավորումը, ձայներանգի մաքրությունը: Երեխաները ձեռք են բերում որոշակի պատկերացում երաժշտական հնչյունի բարձրության, տեմբրի, հնչյունի ուժգնության մասին, երգերում և երաժշտական խաղերում

ձգտում են կերպարի արտահայտիչ կատարմանը (վերարտադրմանը):

3. **Երաժշտառիթմիկ շարժում, պարեր, խաղեր**. ձևավորել երեխաների կատարողական ունակությունները, երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների արտահայտչականությունը, պարերում և երաժշտական խաղերում իմպրովիզացիոն շարժումներ կատարելու կարողությունը:

Երեխաների երաժշտական ունակությունները ձևավորելու համար կարևոր է, որպեսզի երաժշտության մասնագետը ձայնային վարժություններ կատարի երեխաների հետ։ Այդպիսով կզարգանան երեխաների ձայնալարերը, կընդլայնվի նրանց դիապազոնը, երեխան կկարողանա հեշտությամբ անցում կատարել բարձր տոնայնությունից դեպի ցածրին և հակառակը։

1.3«Երաժշտություն» առարկան որպես գեղագիտական դաստիարակության կարևոր միջոց

Երաժշտական դաստիարակությունը գեղագիտական դաստիարակության բաղադրիչներից է : Հայտնի է , որ երաժշտությունը մշակութային առօրյայի հիմնական բաժիններից մեկն է , ան հնչում է ամբողջ օրվա ընթացքում ՝ առավոտյան մարմնամարզության , ֆիզկուլտուրայի , երաժշտական պարապմունքների ընթացքում :

Սակայն երաժշտական գեղագիտական դաստիարակության ուղղությամբ լուրջ աշխատանք իրականցվում է երաժշտական դասերի ընթացքում :

Երաժշտության դասերը դպրոցում կազմվում են հստակ ծրագրով , որի ընդացքում լուծվում են մի շարք երաժշտական , գեղագիտական և դաստիարակչակա խնդիրներ :

Դրանցից են ՝ երաժշտական լսողության և ռիթմական զգացողության զարգացումը , ինտոնացին մաքրության ապահովումը , տեմբրային լսողության զարգացումը և այլն : Յուրաքանչյուր երգ, լինի պարզ կամ բարդ, փոքր կամ մեծ. պետք է կատարվի գեղարվեստական բարձր ճաշակնով և արտահայտիչ ձևով: Երրեխաներին պետք է ծանոթացնել կատարողական տարբեր ձևերի, օրինակ՝ տարբեր տրամադրությամբ և տարբեր շեշտերով պետ է կատաել քայլերգերը, քնարական երգերը, պարերգերը և այլն: Երեխաների երգեցողությունը պետք է լինի գեղեցիկ: Երեխան սիրում է երաժշտություն և կարողանում է տարբերել գեղեցիկ երգը տգեղից, լավը՝ վատից:

Երաժշտական դասերը կրում են համալիր բնույթ , դա նշանակում է , որ մեկ պարապմունքի ընթացքում երեխաներն առնչվում են գործունեության բոլոր տեսակների ՝

1. Երաժշտության ունկնդրում
2. Երգի կատարում
3. Երաժշտառիթմիկ շարժումներ
4. Նվագ մանկական նվագարաններով

Գեղարվեստական երգեցողության համար գեղեցիկ և ճիշտ առոգանությունը անհրաժեշտ պայմաններից մեկն է: Երգչական ունակությունների ուսուցման զարգացման պրոցեսում պետք է հատուկ ուշադրություն դարձնել երեխաների ճիշտ առոգանության վրա, առանց դրա գեղարվեստական երգեցողություն լինել չի կարող:Շատերը կարծում են, թե ուժեղ երգեցողության դեպքում է, որ երգն ըմբռնելի է լինում ունկնդրի համար: Դա սխալ է: Կարելի է երգել շատ ուժեղ, բայց բառերը վատ արտասանել, և կարելի է երգել մեղմ, բայց բառերը պարզ ու հասկանալի արտասանել: Հարկավոր է լավ արտասանել ձայնավորները (օ, ա, ու, ի , է), բերանի բացվածքին տալով արտասանվող հնչյունին համապատասխան և հարմար ձև:Ժողովրդական ավանդույթները աճող սերնդի սոցիալական վարքի արդյունավետ կարգավորիչներ են և արտացոլում են տվյալ ժողովրդի հոգեկերտվածքը, բարոյական նկարագիրը: Յուրաքանչյուր ազգ ավանդույթների միջոցով է գնահատում իրականությունը, ավանդույթներում են արտացոլված

ժողովրդի պատմությունը, ազգային ինքնագիտակցությունը: Ավանդույթները դիտարկվում են որպես մշակութային փուլերի՝ կայուն, սերնդեսերունդ կրկնվող և ամրապնդվող կապեր, որոնք գործում են որպես մշակութային մի մակարդակից մյուսին անցման մշակութային ժառանգության ձև և միջոց:

Երաժշտության դաստիարակի մասնագիտական վարպետությունից է կախված թե երգը որքանով մաքուր և գրագետ կկատարվի : երգերի սխալ ուսուցումը կարող է վնասել երեխաների ձայնալարերը :

Ցանկացաց երժշտական ստեղծագործություն տարբեր տարքում կարող է ընկալվել յուրով և նորովի :

Գլուխ 2

Երաժշտական ունկնդրումը՝ երաժշտական դաստիարակության կարևոր տեսակներից մեկը

Երաժշտության ունկնդրման դասերի նպատակն է երեխաների մեջ սեր առաջացնել դեպի երաժշտությունը, զարգացնել նրանց երաժշտական ճաշակը, սովորեցնել նրանց լսելու կատարվող երաժշտական ստեղծագործությունը: Երաժշտության ունկնդրման դասերը լրացնում են երեխայի այն գիտելիքները, երբ նա ստացել է երաժշտության եւ երաժշտության դասերին: Երաժշտության ունկնդրման դասեր պետք է անցկացնել ուսման հենց սկզբից: երեխաներն մեծ սիրով են մասնակցում երաժշտության ունկնդրմանը:Երաժշտության ունկնդրման ավարտից հետո պետք է պատմել ունկնդրումից ստացած իրենց տպավորումների մասին, ինչպիսի՞ն է ստեղծագործության բնույթը (ուրախ, թախծոտ, տխուր, տեմպը արագ, հանդարտ, դանդաղ) ո՞վ է կատարում այն մենապա՞րը, թե՞ երգչախումբը, նվագարա՞նը, թե նվագախումբը եւ այլն: Այդ տարիքի երեխաները դժվարանում են բառերով ճիշտ ձեւակերպել երաժշտությունից ստացած իրենց տպավորություններն ու զգացողությունները, դրա համար պետք է երեխաներին օգնել նրանց մտածողությունը խթանող հետեւյալ հարցերը.

ա. Ի՞նչ տպավորություն ստացար:

բ. Ի՞նչ ես ուզում անել այդ երաժշտության ուղեկցությամբ երգել, պարել, քայլել

գ.Ի՞նչ նվագարան էր հնչում:

դ. Ի՞նչ գույներով կներկայացնես այդ երաժշտությունը:

ՈԻնկնդրման գործընթացն իրականացվում է հետեւյալ հերթականությամբ.

ա. Ուսուցչի մեկնաբանող խոսք

բ. երաժշտական ստեղծագործության գեղարվեստական կատարում

գ .դիդակտիկ նյութերի ցուցադրում

դ. Երաժշտության բնութագրում:Երգեցիկ խմբում մասնակցող երեխաները ձեռք են բերում երգչական ունակությունները, միջոցառումների ժամանակ հայտնաբերվում են շնորհալի երեխաներ՝ ասմունքողներ, պարողներ, նվագողներ, երգողներ, որոնք իրենց ելութներով հարստացնում են այդ հանդեսների ծրագրերը:՝

Գործնական աշխատանք

Թեման-Ունկնդրել <<Նոր տարի>> երգը երաժիշտ Ռ.Պետրոսյանի խոսք Կ.Գևորգյանի

Ամրապնդել <<իմ սակնակը>> երգը շարունակել ուսուցանել <<պար դափերով>>պարը

Կրկնել <<Ում շրջանը շուտ կհավաքվի>>խաղը

Խնդիրները-Հարստացնել երեխաներին ամանորյա տոնին նվիրված նոր երգերի տպավորություններով <<նոր տարի>> երգի ունկնդրման և ուսուցման միջոցով

- Ամրապնդել երգի արտահայտիչ և ուրախ կատարման հմտությունը,տարբերել երգերի արագությունը
- Սովորեցնել պարել ռիթմիկ,ճիշտ կատարել հարվածները դափին
- Խբրացնել երեխաների ստեղծագործական կարողությունները՝խաղի կրկնության միջոցով

Պարապմունքի ընթացքը-Երեխաները դահլիճ են մտնում քայլերով,շարժոափոխումներ, պարային քայլեր,և նստում են աթոռակներին Երաժշտության դաստիարակը զրուցում է երեխաների հետ ամանորյա տոնի մասին և առաջարկում ունկնդրել <<նոր տարի>> երգը կատարում է երգը մեկ անգամ պարզում պարզում երգի բնույթը և տրամադրությունը։Երկրորդ ունկնդրումից առաջ դաստիարակն արտասանում է երկրորդ բառերը,բացատրում է իմաստը և անցնում երկրորդ ունկնդրմանը։Երաժշտության դաստիարակն առաջարկում է վերարտադրել երգի ռիթմիկան պարկերը ծափերով,դափով,երաժշտական մուրճիկով և այլ ռիթմական նվագարաններով։Ամփոփել երգը կատարդլ ձայնային վարժություններ և անցնել << իմ սահնակը>> երգի ամրապնդմանը

Երգը կատարում են խմբով ,ենթախմբերով,մենակատարներով։երգը կրկնում են երեք անգամ։Շարունակում են <<Պար դափերով>>պարի ուսուցումը

Դաստիարակը նորից ցուցադրում է պարը,որից հետո առաջարկում է երեխաներին դանդաղ տեմպով կատարել պարն ամբողջությամբ Պարելու

ընթացքում դաստիարակը սովորեցնում է պարի շարժումները և հետևում,որ պարեն ռիթմիկ,ճիշտ հարվածեն դափերին,պահպանեն շրջանը

Պարը կատարում են երեք անգամ ։

Կրկնում են <<Ու՞մ շրջանը շուտ կհավաքվի>> խաղը.խաղալու ընթացքում փոխվում է երաժշտությունը և երեխաները նոր լուծումներ են հորինում,միաժամանակ ճիշտ կողմնորոշվում իրենց տեղեդում ։խաղը կրկնում են երեք անգամ։

Խրախուսվում են գեղեցիկ կատարումները։Քայլերգով դուրս են գալիս դահլիճից։

Տնօրենի եզրակացություն

Այսպիսով կարելի է եզրակացնել,որ երեխաները ամբողջ պարապմունքի ընթացքում ճիշտ կատարում էին ռիթմին համապատասխան պարային էլեմենտները:Կարողացան ունկնդրել երգը ամբողջությամբ:Երաժշտական մուրճիկներով և նվագարաններով վերարտադրեցին իրենց երաժշտական ունակությունները:Խաղի ընթացքում շատ ոգևորված էին խաղում,ընթացքում փողվում էր երաժշտությունը և երեխաները նոր շարժումներ էին հորինում,և միաժամանակ ճիշտ կողմնորոշվում իրենց տեղերում:

Եզրակացություն

Հիմնախնդրի տեսական ուսումնասիրության վերլուծությունն ու ամփոփումը թույլ են տալիս ձևակերպելու հետևյալ եզրակացությունները՝

1.Երաժշտական պարապմունքները դաստիարակում են՝ կամք, կարգապահություն. գեղագիտական ճաշակ և պատասխանատվության զգացում:

2. Երաժշտական պարապմունքը դաստիարակում են փոքրիկ արտիստների, նրանք կարողանում են շուտ կոմնորոշվել և միաժամանակ կատարել մի քանի գործ:

3. վերլուծվեցին երաժշտական գործունեություն և գեղագիտական դաստիարակաություն հասկացությունները,

Եզրահանգման եկա. որ պաՐապմունքի ընթացքում հնչող երաժշտական գործիքների օգնությամբ զարգանում է ընդունակությունները, լսողությունը, գեղագիտական ճաշակը, երևակայությունը: Երեխաները հասկացան, որ նվագարանների փոփոխությամբ կարելի է ստեղծել տարբեր բնույթի կերպարներ: Երաժշտությունը վերացական արվեստից վերածվեց իրական, շոշափելի գործունեության :Հասկացա որ երաժշտության բնույթը ազդում է երեխաների տրամադրության վրա : հիմնավորվեց, որ սովորողների գեղագիտական դաստիարակությանը նպաստող լավագույն միջոցը երեխաների մոտ երաժշտական բարձր պատկերացումների, երաժշտական ճաշակի ձևավորումն ու զարգացումն է: Պարապմունլի ընթացքում ունկնդրելով, վերլուծելով, երգելով սաները մտան երաժշտական աշխարհը, որտեղ հղկվում է նրանց գեղագիտական ճաշակը:

Գրականության ցանկ

- https://lib.armedu.am/files/resource/files/2023-08-28/12b30d2d8af883212d89af201d120069.pdf
- https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176070
- http://www.irtek.am/views/act.aspx?aid=121433